Արձանագրություն N 7

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սաֆարյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Գուլգուլյանը, Ե. Մատասյանը, Ռ. Այվազյանը, Ա. Մարգարյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/8» ծածկագրով գնման ընթացակարգը շարունակելու մասին

(Ա. Սաֆարյան)

1.1. Հայտերի բացման.

- վայրը՝ Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 321 սենյակ

-օրը՝ 15.07.2020թ.

-ժամը՝ 11:00

1.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից՝ «Իջևանի մեխանիկական գործարան» ԲԲԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը (30.06.2020թ.) և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները՝ «Իջևանի մեխանիկական գործարան» ԲԲԸ-ն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը՝ որոշեց 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակցին որոշելու նպատակով բավարար գնահատված հայտ

ներկայացրած մասնակիցներին հրավիրել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների, որը որը տեղի կունենա 20.07.2020թ. ժամը 11:00-ին:

Բանակցությունների համար վերջնաժամկետ սահմանել տաս րոպե:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

2.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 20.07.2020թ. ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա. Սաֆարյան
Անդամներ՝		Վ. Գուլգուլյան
		Ե. Մատասյան
		Ռ. Այվազյան
		Ա. Մարգարյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան